ԿԱՐԻՆԵ ՄՈՍԻԿՅԱՆ
Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտաշխատող
էլհասցե՝ karinemosikyan@mail.ru

ՀԱՎԱՏՔԻ ԵՒ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՆԵՄԵՍԻՈՍ ԵՄԵՍՑՈՒ «ՄԱՐԴՈՒ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԿՈՒՄ

Ամփոփում

Չորրորդ դարի հույն փիլիսոփա Նեմեսիոս Եմեսացու «Մարդու բնության մասին» աշխատությունը, որը հունաբան դպրոցի վերջին շրջանում՝ ութերորդ դարում, հայերեն է թարգմանել Ստեփանոս Սյունեցին՝ Դավիթ Հյուպատոսի աջակցությամբ, հայ բնագիտական և բնափիլիսոփայական մատենագրության համար գիտելիքների կարևոր շտեմարան էր: Երկի հայերեն թարգմանական բնագիրն ընդօրինակվել է ողջ միջնադարի ընթացքում: Այն պահպանվել է բազմաթիվ ձեռագրերում (շուրջ 65 ձեռագիր): Որպես Նեմեսիոսի գրքի շարունակ աճող հետաքրքրության ապացույց՝ պահպանվել են նաև զանազան լուծումներ, պատճառներ, մեկնություններ, ծաղկաքաղեր, որոնք հունական ազդեցության ծաղկման շրջանում իրենցով լրացրել են հայ բնափիլիսոփայական գրականությունը՝ հիմք նախապատրաստելով հայ ինքնատիպ գիտության մեջ այդ ոլորտների ձևավորման համար: Զարմանալի չէ, որ Նեմեսիոսի երկից մեջբերումները բավական հաճախադեպ երևույթ են միջնադարյան տարբեր հեղինակների ստեղծագործություններում: Ընդօրինակված ձեռագրերի մեծ քանակը և բազմաթիվ հայ հեղինակների ստեղծագործություններում այս երկից առանձին հատվածների և նույնիսկ ամբողջական գլուխների մեջբերումը խոսում է այն մասին, որ երկը մի տեսակ մարդաբանության դասագիրք էր միջնադարյան Հայաստանում:

Այս հանրագիտարանային աշխատությունը կարևոր նշանակություն ունի, ընդհանրապես, քրիստոնեական փիլիսոփայության համար: Այստեղ ներկայացված են մարդու ստեղծման, նրա բնույթի, բնության մեջ նրա տեղի և դերի, նրա հոգեկան զորությունների և ֆիզիկական հատկությունների մասին անտիկ և քրիստոնեական բնափիլիսոփայության ու մարդաբանության պատկերացումները: Զգտելով անտիկ բանապաշտական մոտեցումները հաշտեցնել աստվածաշնչյան իրողությունների հետ, Նեմեսիոսի նպատակը ոչ միայն սեփական տեսակետների շարադրումն է, այլ գոյություն ունեցող տեսությունների հավաքագրումն ու փոխանցումը միջնադարյան քրիստոնեական մշակույթ՝ անտիկ բնափիլիսոփայությունը ներկայացնելով քրիստոնեական գաղափարախոսության լույսի ներքո:

Հոդվածում ներկայացվում է «Մարդու բնության մասին» երկում առկա բնափիլիսոփայական և աստվածաբանական գաղափարների փոխհարաբերության հարցը:

Բանալի բառեր և բառակապակցություններ. Նեմեսիոս Եմեսացի, մարդու բնություն, միջնադար, մարդաբանություն, քրիստոնեություն, փիլիսոփայություն:

Ներածություն

Վաղ շրջանի թարգմանական գրականությունը հայ մատենագրության այն հենասյուներից է, որոնց վրա ձևավորվել են միջնադարյան հայ մատենագիրների աշխարհայացքը, գրական և գիտական պատկերացումները: Հատկապես կարևորվում էին հունարենից կատարված թարգմանությունները, քանի որ դրանք հաճախ ամփոփում էին ոչ միայն տվյալ ժամանակաշրջանին վերաբերող տեղեկություններ, այլ նաև անցյալից պահպանված գիտելիքներ: Այդպիսի աշխատություններից է Դ. դարի հույն փիլիսոփա Նեմեսիոս Եմեսացու «Մարդու բնության մասին» երկը, որի տեսական դրույթներն ու հայեցակարգային ընդհանրացումները բխում են անտիկ մշակույթի բավականաչափ հարուստ փիլիսոփայական մոտեցումներից՝ ներդաշնակորեն միավորելով անտիկ ու վաղ միջնադարյան բնագիտությունը, բնափիլիսոփայությունը, փիլիսոփայությունը և կրոնը: Նեմեսիոս Եմեսացու «Մարդու բնության մասին» երկը ներկայացնում է բնափիլիսոփայական գիտելիքի պատմական ուղին անտիկից մինչև վաղ քրիստոնեական շրջան: Այն բնագիտական և մարդաբանական գիտելիքների աղբյուր էր նաև հայ բնափիլիսոփայական միջավայրում՝ էական ազդեցություն ունենալով միջնադարյան հայ մշակույթի և փիլիսոփայության, ինչպես նաև հայ մտածողների մարդաբանական, հոգեբանական ու բարոյագիտական հայացքների ձևավորման վրա: Հայկական միջավայրում Նեմեսիոսի գրքի շարունակ աճող հետաքրքրության ապացույց են երկի հայերեն թարգմանական բնագրի մեծաքանակ ընդօրինակությունները (շուրջ 65 ձեռագիր), ինչպես նաև բազմաթիվ լուծումները, պատճառները, մեկնություններն ու ծաղկաքաղերը, որոնք հունական ազդեցության ծաղկման շրջանում իրենցով լրացնում էին հայ բնափիլիսոփայական և մարդաբանական գրականությունը՝ հիմք նախապատրաստելով հայ ինքնատիպ գիտության մեջ այդ ոլորտների ձևավորման համար: Նախկինում մենք առիթ ունեցել ենք ներկայացրելու այս գրքի նշանակալի ազդեցությունը հայ գիտական

մտքի զարգացման վրա[1]: Ակնհայտ է, որ Նեմեսիոս Եմեսացու խիստ գիտական, բանապաշտական մտածելակերպը ընդունելի է եղել հայ հեղինակների համար: Երկում զուգահեռ ընթացող փիլիսոփայական և աստվածաբանական վերլուծությունները բազմաբնույթ և հետաքրքիր քննարկումների առիթ են դարձել հայ մատենագիրների երկերում: Նեմեսիոսի երկից մեջբերումները բավական հաճախակի են միջնադարյան տարբեր հեղինակների՝ Հովհաննես Սարկավագ Իմաստասերի, Հովհաննես Պլուզ Երզնկացու, Հովհան Որոտնեցու, Գրիգոր Տաթևացու և այլոց աշխատություններում: Այս առումով կարևոր ենք համարում ներկայացնել միջնադարում մեծ տարածում գտած հավատի և փիլիսոփայության փոխհարաբերության հարցի քննարկումը Նեմեսիոս Եմեսացու «Մարդու բնության մասին» երկասիրության մեջ:

Հավատի և բանականության փոխհարաբերության խնդիրը՝ սկիզբ առնելով քրիստոնեության տարածման վաղ փուլերում, իր դասական իմաստը ստացավ հատկապես հայրաբանության և սքոլաստիկայի շրջանում: Նպատակը նոր քրիստոնեական հավատի հաշտեցումն էր անտիկ փիլիսոփայության նախնական բանապաշտական սկզբունքների հետ: Վաղ շրջանում քրիստոնեությունը անտիկ մշակույթի նկատմամբ դրսևորում էր երկու տեսակի վերաբերմունք: Մի դեպքում բացարձակ մերժվում էր անտիկ գիտությունն ու փիլիսոփայությունը՝ հայտարարելով, որ ոչ մի ընդհանուր բան չի կարող լինել հավատի և բանականության, Հայտնության և տրամաբանության միջև, սակայն սկսած երրորդ դարից քրիստոնեության ջատագովության մեջ բյուրեղանում էր մյուս տեսակետը, որը ոչ միայն կարևորում էր փիլիսոփայության և բանական ճանաչողության դերը, այլև դրանք օգտագործում էր հայտնութենական ճշմարտությունների հիմնավորման և մեկնաբանման նպատակով[2]: Աստվածային հայտնության և մարդկային բանականության հաշտեցման ճանապարհն ուրվագծվում էր, երբ դրանց փոխհարաբերությունը դիտարկվում էր ոչ թե էական հակադրության, այլ նախասկզբնական նույնականության մեջ[3]: Աշխարհիկ մշակույթի յուրացումը՝ նախքան Սուրբ Գրքի ըմբռնումը, և հետագայում դրա ներմշակութացումն ու մկրտությունը

[1] Տե՛ս Կ.Մոսիկյան, Նեմեսիոսի *Յաղագս բնութեան մարդոյ* երկը հայ միջնադարյան գրականության մեջ, Բանբեր Մատենադարանի N26, Ե., 2018, էջ 177-206:

[2] Տե՛ս Ս.Զաքարյան, Փիլիսոփայության պատմություն, Ե., 2000, էջ 101-103

[3] Տե՛ս М. Канто-Спербер, Дж. Барнз, Л. Бриссон, Ж. Брюнсвиг, Г. Властос, Греческая философия, Т 2. – М., греко-латинский кабинет Ю. А. Шичалина, 2008, էջ 790:

քրիստոնեության ավազանում, այդ շրջանի, և հատկապես Ալեքսանդրիայի դպրոցում ուսումնառած փիլիսոփա-հոգևորականների առաքելությունն էր:

Մեթոդաբանությունը

Մեթոդաբանական հիմք է դարձել տեսական դրույթների համադրումը: Կիրառվել են վերլուծական, համեմատական մեթոդներ:

Նեմեսիոս Եմեսացու «Մարդու բնության մասին» երկը

Այդ շրջանի կարևոր ներկայացուցիչ էր չորրորդ դարի հույն փիլիսոփա Նեմեսիոս Եմեսացին, որի «Մարդու բնության մասին» երկը ներկայացնում է բնափիլիսոփայական ու մարդաբանական գիտելիքի պատմական ուղին անտիկից մինչև վաղ քրիստոնեական շրջան: Որպես քրիստոնյա մտածող, արևելյան հայրաբանության երևելի ներկայացուցիչ, անկասկած արժևորելով աստվածաշնչյան իրողությունները, և դրանք հիմնավոր համարելով՝ Աստծուց ոգեկոչված լինելու պատճառով, Նեմեսիոսի բնափիլիսոփայական, բնազանցական, մարդաբանական ու բարոյագիտական հայացքների հիմքում ընկած են հայտնութենական ճշմարտությունները, որոնք զուգահեռելով անտիկ մշակույթի ավանդույթների հետ, նա դրանք հիմնավորում ու մեկնաբանում է հեղինակավոր փիլիսոփաների ռացիոնալ փաստարկներով:

Նեմեսիոսի մասին մեզ հասած տեղեկությունները չափազանց սուղ են: Հնագույն և, թերևս, միակ աղբյուրը, որին դիմում են տարբեր հետազոտողներ, Գրիգոր Նազիանզացու՝ ոմն հեթանոս փիլիսոփա Նեմեսիոսին հասցեագրած նամակներն են, ում Աստվածաբանը ջանադրաբար քրիստոնեություն էր քարոզում[4]: Արդյունքում, ներկայանալով իբրև քրիստոնեական եկեղեցու եպիսկոպոս, Նեմեսիոսն իր «Մարդու բնության մասին» երկում չի արտահայտում հատուկ աստվածաբանական կամ քրիստոնեական հետաքրքրություններ, գրում է Վլադիմիրսկին[5]: Այս առնչությամբ Գ. Զարբհանայանը ևս նկատում է. «Բովանդակ գրուածին մեջ հեղինակը ոչ աննշան, մանաւանդ, թէ երբեմն բազմահմուտ իմաստասէր կ՛երևնայ, բայց քրիստոնեական կրօնից

[4] Տե՛ս Святитель Григорий Богослав, Творения, т. 2 (Стихотв. Письма. Завещание), М., 2000, N 184-187.

[5] Տե՛ս Владимирский Ф.С, Антропология и космология Немезия, еп. Емесского, в их отношении к древней философии и патристической литературе, Житомир, 1912, էջ 11:

ճշմարտութեանց նկատմամբ՝ թերևս չափավոր գիտութեամբ»[6]: Գ. Զարբհանալյանն, ընդհանրապես, կասկածի տակ է առնում հույն փիլիսոփայի եպիսկոպոսական աստիճան ունենալու հանգամանքը՝ հաշվի առնելով նրա արտահայտված բանպաշտական մտածելակերպը: Իր հերթին,Արսեն Սուքրին գրում է. «Ինքը կը սիրէ փիլիսոփայական համառոտ անցումն՝ յիշելով ինչ որ կարևոր է, և կը թողու ընթերցողին, որ ինքն իրեն խելքով խրատներ և յորդորակներ շինէ. Եթէ չհամարինք զսա իբրև զՍ. Բարսեղ՝ ճարտասան և պերճախոս, բայց կը ստիպենք յամենայն քայլափոխս խոստովանել, որ երևելի փիլիսոփա մ՛ է, հանդերձ քրիստոնեական յստակ ու ողջամիտ տեսութիւններով»[7]: Ըստ Վլադիմիրսկու, Նեմեսիոսը սինկրետիկ ուղղության ներկայացուցիչ էր, որ փորձում էր միաձուլել ոչ միայն քրիստոնեական, այլ ընդհանրապես, բոլոր փիլիսոփայական ուղղությունները: Նրա կառուցած համակարգում կարելի է գտնել բնազանցական հայեցակարգով փիլիսոփայության և բժշկական բնախոսական ուսմունքների հետաքրքիր սինթեզ[8]: Ակադեմիկոս Լևոն Հովհաննիսյանը Նեմեսիոսին անվանում էր «բժիշկ-փիլիսոփա»[9]: Մի բան հստակ է. Նեմեսիոսն ավելի շուտ փիլիսոփա էր, քան աստվածաբան:

Նեմեսիոսի մարդաբանությունն ու տիեզերագիտությունը

Մարդու կենտրոնական դիրքն աշխարհում, ըստ Նեմեսիոսի, բնորոշվում է նրանով, որ Աստված՝ ի դեմս մարդու, արարեց Համայնի վերափոխման, վերակերտման մի ակունք, որտեղ միավորեց մարմնական ու անմարմին աշխարհները՝ մարմնին հնարավորություն տալով վերառաքվել դեպի հոգևորը, եթե հակվի առաքինության ու բարեպաշտության՝ ժառանգելով աստվածայինն ու մարդու համար նախատեսված երանելի կյանքը, իսկ հոգուն՝ իր էջքով, մարդեղացմամբ՝ ավելացնել իր հոգևոր ունակություններն ու առաջադիմել[10]: Աստվածաշնչյան արարչագործության տեսանկյունից բացահայտելով անտիկ մարդա-

[6] Գ. Զարբհանալեան, Հայկական թարգմանութիւնք նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 630-631

[7] Հ. Արսէն Սուքրի, Նեմեսիոսի մարդակազմութեան գրոց եւ անոր հայ թարգմանութեան ճաշակ մը, Բազմավէպ, ԼԸ. Վենետիկ, 1880, էջ 327:

[8] Տե՛ս Ф. Владимирский, նշվ. աշխ., էջ 16:

[9] Տե՛ս Л. Оганесян, История медицины в Армении, в 5 частях, ч. 1, Ереван, 1946, էջ 150-164:

[10] Նեմեսիոս Եմեսացի, Յաղագս բնութեան մարդոյ, առաջաբանը, հմմտ. բնագիրը և ծնթ.՝ Կ. Մոսիկյանի, Եր., 2019, (1.[13, 19] – այսուհետ այս կերպ կնշվի բնագրում համապատասխան գլուխն ու պարբերությունը):

բանությունը՝ Նեմեսիոսը կարևոր ճշգրտում է կատարում առ այն, որ՝ մարդը միայն իր բնությամբ է աշխարհի կերպավորումը, բայց ստեղծված է Աստծո պատկերով և նմանությամբ: Միաժամանակ նա նախկին մարդաբանական տեսություններն օգտագործում է մարդու մասին քրիստոնեական ուսմունքը նոր գիտելիքներով լրացնելու համար:

Աստվածաստեղծ տիեզերքը, ըստ նրա, հաշվարկված, նախագծված, դասավորված և հարմարեցված է իբրև մեկ ամբողջական համապարփակ կենդանի օրգանիզմ, որտեղ յուրաքանչյուր մաս անհաղորդ չէ մյուսներին, այլ աննկատ խառնված և կորզված են իրարից՝ ամեն մեկը ծնունդ առնելով նախորդից, և ծնունդ տալով հաջորդին: Այս մոտեցումը ոչ միայն չի հակասում աստվածաշնչյան տեսակետներին, այլև հստակեցնում և ձևակերպում է դրանք անտիկ փիլիսոփայության բանապաշտական միջոցներով: Ըստ որում, Նեմեսիոսն իրեն պետք եղած տեղեկություններն ընտրում է Պլատոնից, Արիստոտելից, նորպլատոնականներից, Էպիկուրոսից, ստոիկյաններից, Հիպոկրատեսից, Գալենոսից, որոնց մտքերը զգուշորեն համաձայնեցնում է աստվածաշնչյան տրամաբանությանը: Ավելին, այն գլուխներում, որտեղ ներկայացված փիլիսոփայական կարծիքների մեջ կան սկզբունքային հակասություններ, նա հաճախ որպես հաշտության փրկօղակ կամ անքննարկելի ճշմարտություն մեջբերում է Սուրբ Գիրքը՝ հարթեցնելու համար կնճիռները:

Աստվածաբա՞ն, թե՞ փիլիսոփա

Իսկ երբ հնարավոր չի լինում հաշտեցնել բանապաշտական և կրոնական դիրքորոշումները, Նեմեսիոսը որոշակի միտում է դրսևորում բարոյագիտական հարցերում գերապատվությունը տալու կրոնականին, իսկ գոյաբանական և իմացաբանական հարցերը վերլուծելու անտիկ բնափիլիսոփայության տեսանկյունից՝ հնարավորինս խուսափելով հակասություններից:

Այսպես, մարդու մենաշնորհն ու նրա «գերամբարձ պարգևն» է ապաշխարելով անմահ դառնալը: Նրան ներվում են իր մեղքերը, քանի որ տկար, զանազան բնական կարիքների և զգայական ցանկությունների հակված մարմին ունի, որ շեղում է բանականի ուղղվածությունը, թուլացնում է կամքն ու մղում դեպի կրքեր, որոնցով նա շարժվում է հակառակ բնության և աստվածային օրենքների: Սակայն ափսոսանքն ու ապաշխարությունը հնարավորություն են տալիս կրկին ներում գտնելու և հուսալու անմահության[11]: Հոգու մասին գլխում՝ մանրակրկիտ քննարկելով

[11] Տե՛ս նույն տեղում, 1.[9]:

և ի մի հավաքելով մեծաթիվ փիլիսոփաների խիստ տարբեր կարծիքներ, նա գլուխն ավարտում է հետևյալ խոսքերով. «Արդ, բազում են հոգու անմահության ապացույցները՝ վերցված Պլատոնից և մյուսներից, սակայն դրանք խրթին են և դժվարիմաց, և հազիվ են հասկանալի նրանց համար, ովքեր սնված են այդ գիտելիքներից[12]: Բայց մեզ նրա անմահության ապացուցման համար բավական են աստվածներից ստացած վարդապետությունները՝ ինքնին հավաստիություն ունենալով իրենց՝ Աստծուց ներշնչված լինելու պատճառով: Իսկ ովքեր չեն ընդունում քրիստոնյաների գրքերը, բավական է նրանց ներկայացնել, որ հոգին ապականության ենթակա ինչ-որ բան չէ, այլ անապական է և անմահ»[13]: Այս հատվածում, հիրավի, տպավորություն է ստեղծվում, որ հայտնութենական ճշմարտությունները նրա համար ապացուցման կարիք չունեն: Սակայն, օրինակ, հոգու նախագոյության հանդեպ իր վերաբերմունքն արտահայտելու համար, Նեմեսիոսը հիմք է ընդունում Պլատոնի կարծիքը: Մասնավորապես, Պլատոնի այն միտքը, որ բնատուր գիտելիքները վերհուշեր են, որոնք հոգին կրում է՝ նախքան մարմնում ներդրվելը, նա ընդունում է իբրև հոգու նախագոյությունը հիմնավորող անքննարկելի նախապայման: Պլատոնը բնատուր գիտելիք էր համարում այն հասկացությունները, որ անուսանելի, բայց մտահասու են բոլոր «Է»-երի համար[14]: Հոգու հետ կապված բազմաթիվ հարցերում է Նեմեսիոսը համախոհ և համաձայն Պլատոնի հետ: Օրինակ, որ՝ մարդու հոգին ձևավորվում է մարմնի հետ միասին: Որ այն անմարմին և մտահասու էություն է, որը բանականության կրողն է: Որ հոգին ինքնաշարժ է, քանի որ նրան հատուկ է կյանքը՝ հավերժ ներգործող ինքն իր մեջ, իսկ մարմինը միայն նրա գործիքն է, որն անշարժ ու անգործ կմնար առանց իր արհեստավորի: Այնուհաներձ, Նեմեսիոսը քննադատում է Պլատոնի կարծիքը հոգու և մարմնի միավորման մասին, որը մարմինը ներկայացնում է իբրև հոգու հանդերձանք: Այս հարցում նա ավելի ընդունելի է համարում նորպլատոնական Ամոնիոս Սակկասի մոտեցումը: Հոգու և մարմնի կապը համեմատելի է Աստվածային Լոգոսի և մարդկային բնության միավորման հետ՝ անխառն և անայլայլ, անշփոթ և անպարագրելի: Այս կերպ աստվածային էությանը վնաս չի լինում «նուաստագոյն»-ից, սակայն վերջինս մեծ օգուտ է ստանում աստվածայինից՝ հնարավորություն

[12] Այդ գիտելիքների մեջ խորացած մասնագետներ են:

[13] Նեմեսիոս Եմեսացի, Մարդու բնության մասին, գրաբարից թարգմ., առաջաբանը և ծնթ.՝ Կ. Մոսիկյանի, Եր., 2021, 2[28]:

[14] Տե՛ս նույն տեղում, 13.[2]:

ունենալով մաքուր և անմարմին բնության հետ անարգել թափանցել ամենուր[15], որովհետև մտահասուները՝ չլինելով տեղայնացված, որևէ մարմնով չեն կաշկանդվում, այլ «տարվում ու տարածվում են», «ընթանում ու թափանցում են»՝ ուր կամենան[16]: Եվ «հոգին՝ մարմնի մեջ» արտահայտությունը բնավ էլ նկատի չունի նրա տեղակայումը, այլ կապը մարմնի հետ՝ ըստ փոխհարաբերության և փոխադարձ հակման:

Բնախոսական հարցերում, Նեմեսիոսի մոտեցումները խիստ բանապաշտական են, թեպետ բնախոսական խնդիրների իրագործողն ու պատասխանատուն նույնպես հոգին է: Կրքերի մասին քննարկումների ժամանակ նա առաջ է քաշում Գալենոսի, ինչպես նաև Պլատոնի, ստոիկյանների կարծիքները՝ կիրքը սահմանելով իբրև անբանական հոգու առաջնային, հիմնական և ընդհանուր շարժում, որով կազմվում է կենդանու էությունը[17]: Երբ կիրքը՝ չափազանց և ուժգին դառնալով հասնում է զգայական դաշտ, այն համարվում է բնությանը հակասող և կարող է ծնել մեղք: Այս դեպում արդեն Նեմեսիոսը դրան մոտենում է կրոնական և բարոյագիտական տեսանկյունից:

Կրոնական և բանապաշտական մոտեցումների միջև կարևոր հակասություններից մեկը աշխարհի արարման հարցն է: Իբրև փիլիսոփայական լուրջ կրթություն ստացած, և բնափիլիսոփայական ու բնագիտական տարբեր տեղեկությունների տիրապետող գիտնական, Նեմեսիոսն ընդունում է, որ ֆիզիկական աշխարհի կառուցողական հումքը նյութն է, որը դրսևորվում է բնության չորս սկզբնատարրերի ձևով: Նա նաև կիսում է Արիստոտելի այն կարծիքը, որ նյութը հավերժ է, անարար և ենթակա չէ ոչնչացման: Տարրերն անընդմեջ շարունակվում ու պահպանվում են՝ չավելանալով երբեք և չնվազելով, որի պատճառով ասվում է, որ մեկի ոչնչացումը մյուսի գոյացումն է: Ըստ Ապոլինարիոսի[18], որի կարծիքը նույնպես մեջբերում է Նեմեսիոսը՝ Աստված երկինքն ու երկիրն արարել է անդունդից: Այսինքն, աշխարհի նյութական հիմքը հանդիսացող տարրերի պահման վայրն «ի սկզբանէ» անդունդն էր, որի անունը՝ «նյութի անսպառություն»[19], արդեն խոսում է ինքն իր մասին: Հենց Անդունդից՝ այդ անսահման և անհատակ խորությունից է գոյացել մնացած

[15] Տե՛ս նույն տեղում, 3.[10]:
[16] Նույն տեղում, 3.[3]:
[17] Տե՛ս Նեմեսիոս 2019, 15.[3, 4]:
[18] Ապոլինարիոս Լաոդիկացին այն սակավաթիվ քրիստոնյա հեղինակներից է, որին դիմում է Նեմեսիոսը:
[19] Τῆς ὕλης ἄπειρον. Տե՛ս Nemesius Emesenus, Nemesii Emeseni De natura hominis, ed. Moreno Morani, Leipzig: BSB B. G. Teubner Verlagsgesellschaft, 1987, էջ/տ 53.17:

ամեն ինչ[20]: Փորձելով իր համար ընդունելի այս կարծիքները հիմնավորել աստվածաշնչյան տեղեկություններով, Նեմեսիոսը պարզաբանում է՝ «Թեպետ Մովսեսն աշխարհի ստեղծման ժամանակ չի հիշատակել անդունդը, սակայն Հոբի գրքում ասվում է. «Ո՞վ արարեց անդունդը»[21]: Հետևաբար, անեղ չէ այն, այլ արարված: Պարզապես արարվել է բոլոր մարմնականներից ավելի վաղ՝ «ի սկզբանէ», ստեղծվելով[22] Արարչագործից մյուսների գոյացության համար: Արդ, ասում է՝ սրանից որպես նյութից, հետագայում գոյացել է մնացած ամեն ինչ: Այսինքն, որքան էլ նրա համար ակնհայտ է, որ աշխարհաստեղծումը նյութական հիմքեր ունի, սակայն Ոչնչից արարման աստվածաշնչյան տեսակետը սկզբունքային է ցանկացած քրիստոնյա փիլիսոփայի համար, որովհետև՝ «ինչպես էլ լինի այս, ոչ մի տարբերություն չկա, քանզի նաև այսպես ամեն ինչի Աստված ու արարչագործ է երևում, և ոչնչից Համայնն արարող»[23]: Ի դեպ, այս հատվածի առնչությամբ հետաքրքիր դիտարկում է անում Արսեն Սուքրին: Ըստ նրա, Սուրբ Գրքի հմուտ մեկնիչները լավ գիտեն նաև, որ Նեմեսիոսն «ի սկզբանէ» բառը գործածում է Յոթանասնից հասկացված իմաստով, որ «Անդունդք» է նշանակում, և Անդունդը նախաստեղծ նյութ էր[24]: «Ի սկզբանէ» արտահայտությունն, իսկապես, անսովոր հնչողություն ունի Նեմեսիոս Եմեսացու երկում՝ ստանալով տեղի և ժամանակի միավորյալ իմաստ: «Ի սկզբանէ»-ի մասին գրում է նաև Բարսեղ Կեսարացին իր «Յաղագս վեցաւրեայ արարչութեան» աշխատության մեջ, հայտնելով, որ Արարչությունն ավելի արագ եղավ, քան ակնթարթը, և առանց ժամանակի: Եվ դա Աստծո կամքն էր, որ աշխարհի հաստատությունը՝ արարչությունից,

---

[20] Տե՛ս Նեմեսիոս 2019, նշվ. աշխ., 5[12]:

[21] Իրականում, Հոբի գրքում նման արտահայտություն չկա, սակայն անդունդի արարված լինելու մասին ակնարկ կա Առակաց գրքում. «Ես անդունդները չեղած եմ ծնվել, չառատ աղբյուրները չեղած» (Առակ. Ը 24):

[22] Հունարենում՝ կանխավ հիմնված:

[23] Նեմեսիոս 2021, նշվ.աշխ., 5[12]:

[24] «Մովսէս ըսած էր. իսկզբանէ արար Աստուած զերկին և զերկիր: Նոյնն խոստովանէ Նեմեսիոս: Սակայն գիտեն ամենայն հմուտ մեկնիչք Սուրբ Գրոց, որ այդ «իսկզբանէ» բառն միայն Եօթանասնից հասկրցածն էր, մինչդեռ այլք կը թարգմանէին՝ «յանկարծ, յական թօթափել արար Աստուած զերկին և զերկիր»: Ուրիշներն ալ այդ «իսկզբանէ» բառն Անդունդք կը հասկնային, (յայսմ Նեմեսիոս Ապօղինարի կարծիքն մէջ կը բերէ). և զԱնդունդս առաջնաստեղծ նիւթ մը կը համարէին՝ ուստի զամենայն ինչ ստեղծած ըլլար Աստուած: Եթէ անդունդք, եթէ որ և իցէ տարր ալ դնենք իբր առաջին նիւթ ի գոյացութիւն աշխարհիս, սակայն միշտ ստեղծեալ ըլլալն կընդունի Նեմեսիոս»: Տե՛ս Արսէն Սուքրի, նշվ. աշխ., էջ 334:

ժամանակով չեղավ, այլ դրանից այն կողմ: Իսկ արարչության անունն «իսկզբանէ» է, այսինքն, այն սկսմամբ, որ եղավ ավելի վաղ, քան ժամանակը[25]: Նմանատիպ վերլուծությունները նաև խորհրդապաշտական տարր են պարունակում:

Պատահում է նաև, որ որևէ գիտական մեկնաբանություն հերքելու համար Նեմեսիոսն իբրև հակափաստարկ է ընդունում աստվածաշնչյան տեսակետը: Օրինակ, քննադատելով Եվնոմիոսին, որ հոգին սահմանում է իբրև մարմնի մեջ ստեղծված անմարմին էություն՝ այդ կերպ փորձելով միավորել Պլատոնի և Արիստոտելի մոտեցումները, Նեմեսիոսը նախ հեգնում է, թե՝ նա չի մտածել անգամ, որ ցանկանում է նույնի մեջ հավաքել անմեկտեղելի բաները[26]: Ապա տրամաբանական մեթոդն այս դեպքում համարելով անբավարար, խոսքն ավարտում է ծանրակշիռ փաստարկով, հայտնելով, որ **նույնիսկ Մովսեսը** չի ասում, թե հոգին այն ժամանակ է ստեղծվել, երբ ներդրվել է մարմնի մեջ, և ըստ տրամաբանության էլ այդպես չէ[27]: Եվնոմիոսը նաև պնդում էր, որ մինչև հիմա էլ նոր հոգիներ են արարվում, քանի որ աշխարհը դեռևս չի ամբողջացել: Այս առումով նույնպես Նեմեսիոսը տարակուսում է. «Մինչև հինգ բյուր (50000), և դա դեռ քիչ եմ ասում, բանական (մտահասու) էություններ ամեն օր ժամանում են աշխարհ»[28]: Եթե դրանք բոլորը հիմա են արարվում, այդ դեպքում՝ ե՞րբ է աշխարհում ամբողջանալու հոգիների թիվը: Մի՞թե այն ժամանակ, երբ համընդհանուր հարության շեմին, աշխարհը կմոտենա իր վախճանին: Բայց սա նման է անլուրջ և մանկամիտ խաղի: Եմեսացին անհնարին է համարում նոր հոգիների արարումը, որովհետև Աստված վաղուց ավարտել է իր արարման գործընթացը, և այժմ հանգստանում է: Մերժում է նաև այն կարծիքը, թե նոր հոգիները ստեղծվում են նախախնամության պատվերով՝ «ներմուծելով» ո՛չ նոր էություն, և ո՛չ էլ տարբեր նրանցից, որ արդեն կան, այլ եղածը բազմացնելով՝ ըստ նախախնամության[29]: Ըստ Նեմեսիոսի, այսպիսի կարծիքը բնորոշում է նախախնամության և արարման տարբերությունը չիմացողներին: Նախախնամության գործը ծնունդների հերթագայությամբ կենդանական էության անխաթար պահելն է, իսկ արարման զորավոր գործը՝ ոչնչից գոյացնելը: Սա միայն Աստծուն

[25] Տե՛ս Բարսեղ Կեսարացի, Յաղագս վեցաւրեայ արարչութեան, աշխ. Կ. Մուրադյանի, Եր., 1984, էջ15, 18:
[26] Տե՛ս Նեմեսիոս 2021, նշվ.աշխ., 2.[18]:
[27] Տե՛ս նույն տեղում:
[28] Նույն տեղում, 2.[19];
[29] Տե՛ս նույն տեղում:

վերապահված գործառույթ է, և արմատապես տարբերվում է ստեղծումից: Հետևաբար, եթե նոր հոգիները նախախնամության պատվերով են լինում, ուրեմն եղծանելի են, ինչպես և մյուս բոլոր փոխանորդությամբ ստեղծվածները: Իսկ եթե ոչնչից են առաջ գալիս, ուրեմն արարված են, իսկ դա հերքում է Մովսեսի խոսքը, թե՝ հանգստացավ Աստված իր բոլոր գործերից: Երկուսն էլ անպատեհ են, եզրափակում է Նեմեսիոսը, որովհետև այժմ այլևս նոր հոգիներ չեն առաջանում: Եվ երբ ասվում է՝ «Հայր իմ մինչև այժմ գործում է» (Հովհ. Ե.17), ոչ թե արարելու, այլ նախախնամելու մասին է ասում[30]:

Նեմեսիոսի բարոյագիտական հայացքները

Մարդու անձնիշխանությունը կամ ազատ կամքը հույն փիլիսոփան մեծարում է իբրև բանականության անհրաժեշտ ցուցիչ: Սա, ըստ էության, ընկած է նրա բարոյագիտական պատկերացումների հիմքում: Անձնիշխանության շնորհիվ է մարդը պատասխանատվություն կրում իր կատարած չար ու բարի գործերի համար, որովհետև չարի ու բարու ակունքը մարդու մեջ է, նրա կամքի մեջ: Այդ է պատճառը, որ մարդու անձնիշխան ազատությունը, որը շնորհված է նրան բանականության հետ մեկտեղ, միաժամանակ ենթադրում է նաև անկման հնարավորություն, անկում՝ Կյանքի Ակունքից, Արարչից: Սակայն դա անհրաժեշտ պայման է մարդու բանական լինելու համար: «Արդ, ովքեր մեղադրում են Աստծուն, որ չարության անընդունակ չի արարել մարդուն, այլ՝ անձնիշխան, անգիտանում են ինքնին՝ հանդիմանելով Աստծուն, որ բանական է արարել մարդուն և ոչ անբան: Քանզի հարկ է երկուսից մեկը՝ կա՛մ լինել անբանական, կա՛մ լինելով բանական, իր գործունեության մեջ լինել անձնիշխան, հայտարարում է Նեմեսիոսը[31]: Ինչպես վերևում նշվեց, հույն փիլիսոփայի բարոյագիտական մոտեցումները հիմնավորվում են հիմնականում աստվածաբանական ենթատեքստով, բայց այստեղ ևս նա ակտիվորեն գործածում է փիլիսոփայական մեթոդներ՝ տրամաբանական շղթաներով ներկայացելով փոխկապակցված և փոխպայմանավորված երևույթների միջև պատճառահետևանքային կապերը: Ընդդիմախոսների՝ Սուրբ Գրքից բերված փաստարկներին ի պատասխան, ինչպես օրինակ՝ «Մարդունը չեն նրա ճանապարհները» (Երեմիա, Ժ 23) կամ «Նանիր են մարդկանց խորհուրդները» (Սաղմ. ՂԴ 11), Նեմեսիոսը մեղադրում է նրանց անձնիշխանության իմաստը չհասկանալու մեջ: «Քանզի հարստանալու

[30] Տե՛ս նույն տեղում:

[31] Նեմեսիոս 2021, 40 [3]:

կամ աղքատանալու, կամ առողջ լինելու, կամ էլ բնությամբ և իշխանությամբ ուժեղ, և կամ բոլոր գործարանական կամ պատահական կոչվող բարիքների, կամ էլ նախախնամությամբ իրենց արդյունքը ստացող գործերի նկատմամբ իշխանություն չունենք, այլ այն գործերի, որոնք առաքինությամբ կամ չարությամբ են»[32]: Ընդ որում, դատաստանի ենթակա է ոչ միայն գործողությունը, այլև նախընտրությունը: Այս մասին ասվում է նաև Ավետարանում, նկատում է Նեմեսիոսը: Օրինակ՝ «Ով նայում է կնոջը՝ ցանկանալով նրան, հենց այդ պահին շնանում է նրա հետ իր սրտի մեջ» (Մատթէոս Ե.28): Հոբն էլ էր Աստծուն պատարագ մատուցում՝ իր որդիների՝ իրենց մտքում թույլ տված հանցանքների համար (Հոբ Ա 5): Քանզի մեղքերի և արդարագործության սկիզբը նախընտրությունն է, իսկ գործը երբեմն թույլատրված է լինում նախախնամությամբ, և երբեմն՝ արգելված: Կան գործեր, որ մարդու կամքի տիրույթում են, և կան, որ նախախնամությանն են վերապահված, հետևաբար, հարկ է, որ ողջ լինելությունն ըստ այս երկուսի կառուցվի, «քանզի եթե միայն մեկով լիներ, անշուշտ մյուսը չէր լինի»[33]:

Ճակատագրի և նախախնամության մասին

Նեմեսիոսը չի ընդունում ճակատագրապաշտների այն պնդումը, թե՝ մարդուց կախված չէ չարի և բարու ընտրությունը, և ոչ էլ նրա մեջ է դրանց սկիզբը, այլ դա նրան տրված է ծննդաբաշխ աստղերից՝ անկախ իր կամքից: Այս կերպ, սեփական գործերի պատասխանատվությունը դնելով աստղերի կամ Աստծո վրա, նրանք ավելորդ են դարձնում օրենսդիրներին, որ սահման ու պատվիրան են դնում, թե որ գործը պիտի արժանի լինի գործվելու, և որը՝ ոչ: Ավելորդ են թվում դատավորները, որ պատվում են բարեգործներին, և արդար դատաստանով պատժում չարագործներին, քանզի ըստ ի վերուստ բաշխված ծնունդների՝ գողերի անպատկառությունն իրենց կամքով չէ, և ոչ էլ սպանողի անօրինությունն է սեփական հոժարությամբ, քանի որ իր ծննդյան բնությունն է հարկադրում նրան սպանել կամ հափշտակել[34]: Եվ ընդհանրապես, կյանքում ու աշխարհում

[32] Նեմեսիոս 2021, նշվ. աշխ., 39[2]:

[33] Տե՛ս նույն տ., 39[2]: Ժան-Բատիստ Տիբոյի փոխանցած տեղեկությունն է: Այս մասին տե՛ս Նեմեսիոս 2019, էջ 431, ծնթ. 170:

[34] Գրեթե նույնական մտքեր ենք գտնում նաև Բարսեղ Կեսարացու «Յաղագս վեցաւրեայ արարչութեան» երկում: Ի վերջո, եթե մարդկանց պատիվը և պարգևը չլիներ ըստ նրանց գործած արդարության, և ոչ էլ չարագործների պատիժն ու դատապարտությունը լիներ, ապա իզուր և ընդունայն էր քրիստոնեական հույսը, և անսանձ կընթանային ամենքը՝ չնահանջելով անբարշտության մեջ: Քանզի չէր լինի

ամեն ինչի առաջացման պատճառը վերագրելով աստղերի շրջաբերությանը, ականատես ենք դառնում տիեզերական անարդարության: Քանի որ հավասարների միջև այդպիսի անհավասար բաշխումն անարդար է և անիրավ, և ուրեմն՝ ոչ արժանի է, ոչ էլ անարժան շնորհի[35]:

Նախախնամությունն իբրև Աստծո գերամբարձ հոգածություն իր ստեղծածների նկատմամբ, նույնպես ունի որոշակի գործունեության շրջանակ և իրավասություններ. Համայնի հարամնայությունը, «Է»-երի դիրքն ու կարգը պահպանելը, միշտ նույնօրինակ աստղերի շրջաբերությունը, տարվա պտույտը, ինչպես նաև՝ հանցանքին հետևող պատիժը կամ գաղտնի մեղքերի ի հայտ գալը հանգամանքների բերումով: Պատահական չէ նաև մարմինների կազմությունը, դրանց մասերի չափակցությունների և համապատասխանության մշտապես նույնակերպ պահվելը: Նախախնամության մասին է «աղաղակում» գույների այս բազմազանությունը, ինչպես նաև աղոթքներն ու պատարագները: Որովհետև Աստված բարերար է և, բարերար լինելով, բարեգործում է և հետևաբար նախախնամում: Նեմեսիոսը նախախնամությունը սահմանում է իբրև Աստծո էության մեջ եղածներին հպատակվելը[36]: Այս ձևակերպումն, իհարկե, դժվար է միանշանակ մեկնաբանել: Մեկ ուրիշ սահմանմամբ նա նախախնամությունը համարում է Աստծո կամքը, որով բոլոր «Է»-երն ունենում են իրենց համար պատեհ արդյունքը[37]: Ընդդիմախոսներին դիմելով աստվածաշնչյան բառերով՝ «Մի՞թե կասի կավը՝ բրուտին…» (Եսայի ԽԵ. 9), նա նկատում է՝ մարդուն անհասանելի է մասնավորի նախախնամության գաղափարը, համաձայն այն խոսքի, թե՝ «Անքննելի են դատաստանները նրա, և անզննելի են ճանապարհները նրա» (Հռոմ. ԺԱ. 33), բայց նույնիսկ այս հիմքով չի կարելի ասել, թե՝ չկա նախախնամություն: Քանզի այն պատճառով, որ չգիտենք ծովի չափը կամ ավազահատիկների թիվը, ոչ ոք չի կարող ասել, որ չկա ո՛չ ծով և ո՛չ ավազ, եզրափակում է Նեմեսիոսը[38]:

վրեժխնդիր մեկը, որ վրեժ լուծեր չար գործերի համար: Եվ ինչո՞ւ պետք է պատուհաս կրի մարդ այն բանի համար, ինչը սեփական կամքով չի գործել (տե՛ս Բարսեղ Կեսարացի, նշվ. աշխ., էջ 93-94):

[35] Տե՛ս Նեմեսիոս 2021, 34[1]:

[36] «յԱստուծոյ յէսս եղեալ հպատակումն»- 41.[8]

[37] Տե՛ս նույն տեղում:

[38] Տե՛ս նույն տեղում, 42[12]:

Եզրակացություն

Այսպիսով, հանրագիտարանային բնույթի իր այս արժեքավոր երկասիրությամբ Նեմեսիոսը քրիստոնեական մշակույթ է փոխանցում անտիկ և վաղ միջնադարյան գիտափիլիսոփայական ժառանգությունը մարդու մասին, դառնալով դրա ջատագովման և յուրացման սկզբնաղբյուրներից մեկը: Ի մի բերելով մարդաբանական անտիկ ավանդույթները, և դրանց քրիստոնեական շունչ հաղորդելով, Նեմեսիոսը դրսևորում է և՛ արտահայտված բանապաշտական, և՛ աստվածաշնչյան իրողությունների հանդեպ անդավաճան մոտեցում: Ակնհայտ է, որ նա ունի փիլիսոփայական կրթություն, որովհետև և՛ փիլիսոփայության մասին համապատասխան գիտելիքներ ունի, և՛ կիրառում է փիլիսոփայական մեթոդներ, և՛առհասարակ, փիլիսոփայական տեսանկյունից է վերլուծում նյութը: Հատկապես, գոյաբանական և իմացաբանական հարցերը նա քննում է հիմնականում անտիկ բնափիլիսոփայության տեսանկյունից, իսկ բարոյագիտական հարցերում գերապատվությունը տալիս է կրոնականին:

Իր երկում չօգտագործելով, ինպես Արսեն Սուքրին է ասում, «ճարտասանական գեղեցիկ նկարագրություններ»[39], այլ հակիրճ ու կոնկրետ շարադրելով միայն կարևորն ու անհրաժեշտը, Նեմեսիոս Եմեսացու նպատակը մարդու մասին գիտելիքի հնարավորինս ամբողջական մատուցումն է, ըստ որում, քննելու և մտածելու տեղ թողնելով նաև ընթերցողի համար: Ուշագրավ է, որ այսպիսի վերլուծություններն ու հավատի և բանականության զուգահեռները դեռևս Ը. դարում ընդունելի և անհրաժեշտ են համարվել նաև հայ մատենագիրների համար: Հետևաբար, «Մարդու բնության մասին» երկը՝ առանցքային նշանակություն ունենալով, ընդհանուր առմամբ, միջնադարյան մարդաբանության և բնափիլիսոփայության համար, չափազանց կարևոր դեր է կատարել նաև հայ գիտափիլիսոփայական մտքի զարգացման համար:

Օգտագործված գրականություն

1. Բարսեղ Կեսարացի, Յաղագս վեցաւրեայ արարչութեան, աշխ. Կ. Մուրադյանի, Ե., 1984:
2. Զարբհանալեան Գ., Հայկական թարգմանութիւնք նախնեաց, Վենետիկ, 1889:
3. Զաքարյան Ս., Փիլիսոփայության պատմություն, Ե., 2000:

[39] Տես Սուքրի, նշվ. աշխ., էջ 327:

4. Նեմեսիոս Եմեսացի, Յաղագս բնութեան մարդոյ, ներած., բն. և ծնթ.՝ Կ. Մոսիկյանի, Ե., 2019:
5. Նեմեսիոս Եմեսացի, Մարդու բնության մասին, գրբարից թարգմ., առաջաբանը և ծնթ.՝ Կ. Մոսիկյանի, Ե., 2021:
6. Նեմեսիոսի փիլիսոփայի Եմեսացւոյ Յաղագս բնութեան մարդոյ, Վենետիկ, 1889:
7. Պլատոն, Երկեր 4 հ-ով, հին հունարենից թարգմ. և ծնթ.՝ Ս. Ստեփանյանի, հ. 3, Ե., 2011:
8. Արսէն Սուքրի, Նեմեսիոսի մարդակազմութեան գրոց եւ անոր հայ թարգմանութեան ճաշակ մը, Բազմավէպ, ԼԸ. Վենետիկ, 1880:
9. Святитель Григорий Богослав, Творения, т. 2 (Стих. Письма. Завещание), М., 2000, N 184-187.
10. Владимирский Ф.С, Антропология и космология Немезия, еп. Емесского, в их отношении к древней философии и патристической литературе, Житомир, 1912.
11. Гален К., Сочинения, т. 3, Об учениях Гиппократа и Платона. М., 2016.
12. М. Канто-Спербер, Дж. Барнз, Л. Бриссон, Ж. Брюнсвиг, Г. Властос, Греческая философия, т. 2, Москва, греко-латинский кабинет Ю. А. Шичалина, 2008.
13. Немезий Эмесский, О природе человека, пер. с греч. Ф. Владимирского, Почаев 1904. Переизд., пред. Н. Шабурова, М., 2011.
14. Оганесян Л., История медицины в Армении, в 5 частях, ч. 1, Ереван, 1946.
15. Плотин, Четвертая Эннеада, пер. с древнегреческого Т. Г. Сидаша, С./П., 2018.
16. Nemesius Emesenus, Nemesii Emeseni De natura hominis, ed. Moreno Morani, Leipzig: BSB B. G. Teubner Verlagsgesellschaft, 1987.

Карине Мосикян

К вопросу о соотношении веры и науки в книге Немесия Эмесского «О природе человека»

Заключение

Ключевые слова и выражения: Немесий Эмесский, человеческая природа, Средневековье, антропология, христианство, философия.

Труд греческого философа четвертого века Немесия Эмесского «О природе человека», переведенный на армянский язык Степаносом Сюнеци

при поддержке Давида Юпатоса, в последний период греческой школы, в восьмом веке, был важным источником знаний для библиографии армянского естествознания и натурфилософии. Армянский текст этой книги копировался на протяжении всего средневековья. Армянский перевод текста этой книги сохранился в многочисленных экземплярах (около 65 рукописей). В доказательство постоянно растущего интереса к книге Немесия сохранились множество комментарий, причин, толкований, пополнивших армянскую натурфилософскую литературу в период расцвета греческого влияния, подготовив основу для формирования этих направлений в исконно армянской науке. Неудивительно, что цитаты из книги Немесия — довольно частое явление в произведениях различных армянских авторов средневековья. Большое количество переписанных рукописей и цитирование отдельных разделов и даже целых глав из этой книги в произведениях армянских авторов свидетельствует о том, что книга была своего рода учебником по антропологии в средневековой Армении.

Этот энциклопедический труд важен для христианской философии в целом. Здесь изложены античные и христианские натурфилософские и антропологические представления о природе человека, его месте и роли в мире, о его психических и физических свойствах. Стремясь примирить древние религиозные подходы с библейскими реалиями, Немесий ставит перед собой цель не только представить собственные взгляды, но и собрать и передовать существующие теории в средневековую христианскую культуру. Таким образом, он античную натурфилософию выявляет в свете христианской идеологии. В статье ставится вопрос о соотношении натурфилософских и богословских идей представленные в книге «О природе человека».

Karine Mosikyan

The question of the relationship between faith and science in the book of Nemesius of Emesa «On the nature of man»

Conclusion

Key words and expressions: Nemesius of Emes, human nature, Middle Ages, anthropology, Christianity, philosophy.

The fourth-century Greek philosopher Nemesios Emesatsi's work "On the Nature of Man" was translated into Armenian by Stepanos Syunetsi with the support of Davit Hyupatos in the last period of the Greek school, in the eighth

century. It was an important repository of knowledge for Armenian natural science and natural philosophy bibliography. The Armenian text of this book was copied throughout the Middle Ages. The Armenian translated text of the book has been preserved in numerous copies (about 65 manuscripts). As proof of the continuously growing interest in Nemesius's book, many solutions, reasons, interpretations have been preserved, which added to the Armenian natural philosophy literature during the flowering of Greek influence, preparing the basis for the formation of these directions in the Armenian national science. It is not surprising that quotations from the book of Nemesius are quite a frequent phenomenon in the works of various Armenian authors of the Middle Ages. The large number of copied manuscripts and the citation of individual sections and even complete chapters from this book in the works of many Armenian authors indicate that the book was a kind of anthropology textbook in medieval Armenia.

This encyclopedic work is important for Christian philosophy in general. Ancient and Christian natural philosophical and anthropological ideas about the creation of man, his nature, his place and role in nature, his mental and physical properties are presented here.

Seeking to reconcile ancient rationalist approaches with biblical ideas, Nemesius's goal is not only to set forth his own views, but to collect and transfer existing theories to medieval Christian culture. In this way, he presents ancient natural philosophy in the light of Christian ideology. The article presents the question of the relationship between natural philosophical and theological ideas in the book «On the Nature of man».

Խմբագրություն է ուղարկվել 05.03.2023թ.
Հանձնարարվել է գրախոսության 29.03.2023թ.
Հրապարակման է հանձնարարվել 28.04.2023թ.